

Ա.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՊԱՏՃԷՆ ԿՈՆԴԱԿԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ԱՆՈՒՆՈՎ.

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Մայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Հոգելոյս Նախորդի Մերոյ Տ. Մկրտիչ Ա. Կաթուղիկոսի հաճոյ թուեալ ըստ բերման ժամանակի և առաջի աչաց ունելով կարգ անատերիւր սահմանել յեկեղեցւոջ, ետ Կոնդակ յանուն Ս. Ատենիդ ի 4 յունուարի 1902 *ամի ընդ համարաւ 4, որ վասն վեցերորդ, հինգերորդ աստիճանի ազգակցական և ի չորրորդ աստիճանի ինամէական պատկաց։ Արդ ի նկատի առեալ Մեր կենցաղական արդիւնս Կանոնական Կոնդակի Նախորդի Մերոյ, որով ի կանոնելն*

պսակացդ տայ տեղի թիւրիմացութեան և պատճառ ՚չ լծով օրինականութեան և կարգաց Ս. Եկեղեցւոյ եկեղոց ընդ պաշտօնէից զանցառութեանց և թերութեանց ՚ի պաշտամանն, ուստի Մերս Հայրապետական Կոնդակաւ զբարիոք ընթացս պաշտօնէութեան Ս. Եկեղեցւոյ առեալ ՚ի նկատի, այլ և յանթերի և յանսայթաք պահպանութիւն կանոնաց Ս. Եկեղեցւոյ և արտօնութեանց, որ միմիայն Գերագոյն Գլխոյն են իրաւունք, կանոնեմք զյիշատակեալն հրահանգութեանց մէն մի կէտ այսպէս։ Ա. անվաւերք համարեսցին իսպառ պսակադրութիւնք հինգերորդ աստիճանաց ազգակցութեան և չորրորդ աստիճանաց խնամէական։ Բ. անթոյլատրելի համարեսցին պսակք վեցերորդ աստիճանի ազգակցութեան, բայց եթէ ՚ի ձեռն Առաջնորդաց թեմից զարտօնութիւն յամենայն նուազս առանձին ընկալնուլ ՚ի Մէնջ, որպէս ՚ի Գլխոյ Եկեղեցւոյս։ Գ. եթէ դիպեսցի կատարել պսակադրութեանց յանհերելի աստիճանս, որ ՚ի վեր անդր յիշատակեցաք, ապա պսակքն համարեսցին անվաւերք և պսակադիր քահանայքն իսպառ ՚ի քահանայագործութենէ դադարեսցին։ Առիթ և պատճառանք չքմեղանաց մի ընդունեսցին ամենևին, զի քահանայ ոք, յոյր գործ ապօրինի մտցէ, ապա և ունի կրել զարժանին պատիժ ապօրինի գործոյն և ընդվզելոյն կանոնաց Հայրապետականաց, այլ և օրինակ չարութեան հանդիսանալոյն, եթէ յաչս պաշտօնակից եղբարցն, եթէ յաչս ժողովրդեան և եթէ այնոցունց, որք գործի չարութեան զնա համարեալ՝ ապօրինի արդիւնս կրից իւրեանց տան ածել ՚ի կատար։

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 10 դեկտեմբերի 1916 ամի
Ըստ տոմարիս ՌՅԿԵ
ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
յԱյրարատեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 2721